

Թանձրը խաւար ծընընդական կոյրերուն՝
 Չի ես տեսայ ապագայիս մէջ տըմոյն
 Յայրըս ճերմակ մազերով...
 Ես գերին եմ իմ գոյութեան պատճառին.
 Կը խոնարհի սիրտս իր արեամբ միասին
 Չինքը լեցնող սըրտին տակ:
 Քնարիս լարին մօրըս մազերն կառչեցան,
 Եւ սիրոյ մազն երգի լարէն, ա՛հ, ո՛րքան
 Չօրաւոր է եւ անքակ:
 Ինծի կ'ըսեն. "Չի՛ ամփոփուիր հայ գըրչին
 Մէջ հայ գրողին անձնական կեանքն իսկ մըթին.
 Քընարն Յայուն չունի բաստ":
 Ինծի կ'ըսեն. "Աչքերըդ վա՛ր իջեցուր.
 Վերացումդ այդ պիտի հասնի մինչեւ ո՛ւր...
 Եթէ հաճոյք է երագդ՝
 Յաճոյքն իժի թոյն պիտ' ըլլայ քեզ համար.
 Երագդ եթէ սերմընցան է, ցանքըդ յար
 Պիտ' կոխոտուի ծըլած կես:
 Վա՛ր նայէ, վա՛ր. ալ բաւական է՝ խոկուն՝
 Գըլուխ գըլխի Անծանօթին հետ տըժգոյն՝
 Կեանքը մոռնաս, մոռնաս քեզ:
 Եղծէ՛ բնութեան պատկերն, եղծէ՛ հոգւոյդ մէջ.
 Թռիչքըդ փետէ՛. գըրքիդ ներքեւ գըրէ՛. վերջ:
 Ըստուերին մէջ կը տեսնե՛ս.
 Ծնողքըդ ուղղած է թըշնամի շունչն իր ահա
 Այն ջահին դէմ՝ զոր վառեցիր բազնին վրայ
 Գաղափարին լուսերես:
 Երթանք, երթանք": -Ո՛չ, ո՛չ, հեռո՛ւ. թողէք զիս.
 Կը ծաղրեմ կեանքն. ի՛նչ կառչեցաք հոգիիս:
 Կ'ուրանամ հա՛յրս, այո՛.- դե՛ռ:
 Թողէք մեծնամ, հըսկայանամ մըտքիս հետ.